Մարդամեջ 2021 սոցիալական նորարարության հավաք

Հաճախ տրվող հարցեր

Ի՞նչ է Մարդամեջը, և ո՞վ է այն կազմակերպում։

Մարդամեջը վեցօրյա հավաք է, որի ընթացքում մասնակիցները մշակում են ստեղծագործ ծրագրեր, որոնք առաջարկում են համայնքային խնդիրների լուծման նոր մոտեցում։

Ինչպիսի՞ ներգրավվածություն է ակնկալվում մասնակիցներից հավաքի ընթացքում և դրանից հետո։

Վեցօրյա հավաքի ընթացքում մասնակիցները մշակելու են ծրագրեր, որոնք ժյուրիի հավանությանն արժանանալու պարագայում ստանալու են ֆինանսավորում և իրականացվելու են հաղթող թիմերի կողմից։ Այսինքն՝ հաղթող թիմերի անդամների ներգրավվածությունը տևելու է այնքան, որքան անհրաժեշտ է ծրագրերի իրականացման համար (4-5 ամիս)։

Ո՞վ և ինչպե՞ս է ընտրում մասնակիցներին։

Մասնակիցների ընտրությունն իրականացնում է ԵՀՀ-ն ԻնֆոՏների հետ միասին՝ ներկայացված հայտերի հիման վրա։

Պարտադի՞ր է լինել ԻնֆոՏան շահառու, որպեսզի կարողանանք մասնակցել Մարդամեջին։

Ոչ, պարտադիր չէ։ Ընտրող հանձնաժողովը մասնակիցների ընտրությունն իրականացնելու է միայն լրացված հայտի հիման վրա։

Ինչպե՞ս են մշակվում և ընտրվում ծրագրային գաղափարները։

Վեցօրյա հավաքի ընթացքում մասնակիցները հավաքի կազմակերպիչների օգնությամբ դուրս են բերում և ընտրում են ծրագրային գաղափարներ, այնուհետև, բաժանվելով թիմերի, գաղափարները ծրագրերի վերածում։ ԵՀՀ-ն ունի հատուկ մշակված մեթոդներ, որոնց միջոցով կազմակերպվում է գաղափարների մտագրոհը, ընտրվում են լավագույն գաղափարները և ձևավորվում են ծրագրային թիմերը։

Ինչպե՞ս են ընտրվում հաղթող ծրագրերը։

ԵՀՀ-ն ձևավորում է անկախ ժյուրի (տարբեր ոլորտներում փորձ և գիտելիք ունեցող ճանաչված փորձագետներ)։ Մասնակիցները Մարդամեջի 6-րդ օրը ներկայացնում են իրենց կողմից մշակված ծրագրերը։ Ժյուրիի անդամները կատարում են ընտրությունը՝ ըստ նախօրոք սահմանված չափանիշների։

Ի՞նչ աջակցություն են ստանում հաղթող ծրագրերը։

Հաղթող ծրագրերի թիմերը ստանում են անհրաժեշտ ֆինանսավորում՝ իրենց ծրագրային գործողություններն իրականացնելու համար, ինչպես նաև ԵՀՀ կողմից անհրաժեշտ

կազմակերպչական և տեխնիկական աջակցությունը՝ ծրագրերի իրականացման ողջ ընթացքում։

Ես բնակվում եմ մարզում, սակայն ուսման պատճառով իմ ժամանակի մեծ մասն անցկացնում եմ Երևանում։ Այս պարագայում հնարավո՞ր է մասնակցել Մարդամեջին։

Քանի որ Մարդամեջը, բացի բուն միջոցառումից, ենթադրում է նաև ծրագրերի իրականացում 5-6 ամիսների ընթացքում, ապա դժվարություններից խուսափելու համար ընտրվելու են այն մասնակիցները, ովքեր բնակվում են մարզերում։

Ես մասնակցել եմ նախորդ Մարդամեջ հավաքներից մեկին։ Կարո՞ղ եմ այս տարի ևս մասնակցել։

Ընտրող հանձնաժողովը սովորաբար նախապատվությունը տալիս է նոր մասնակիցներին։

Ես սովորում եմ դպրոցում/ԲՈՒՀ-ում և չեմ կարող բացակայել առանց հարգելի պատճառի, կտրամադրե՞ն արդյոք միջոցառման կազմակերպիչները ուսման վայր ներկայացնելու համար հատուկ տեղեկանք։

ԵՀՀ-ն տրամադրում է ուս.հաստատություններ ներկայացնելու համար պահանջվող տեղեկանքը՝ բացակայությունը հարգելի համարելու նպատակով։

Ես ունեմ ծրագրային գաղափար, որը համապատասխանում է հայտում նշված թեմաներին և նորարար է։ Հնարավո՞ր է՝ ես առաջարկեմ այդ գաղափարը միջոցառման ընթացքում։

Մարդամեջի մեթոդաբանության հիմքում ընկած է գաղափարները տեղում մշակելու և զարգացնելու սկզբունքը, այդ իսկ պատճառով նույնիսկ եթե մասնակիցը եկել է պատրաստի գաղափարով, այն քննարկվելու է տեղում մշակված բազմաթիվ այլ գաղափարների հետ միասին։